ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2025 թվականի բյուջեն մշակվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը, 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը ինչպես նաև հաշվի են առնվել համայնքում ընդգրկված բնակավայրերում առկա խնդիրներն ըստ լուծման առաջնահերթության:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի գործունեության արդյունավետությունը կախված է բյուջետային գործընթացի ճիշտ պլանավորումից, բյուջեի եկամուտների հավաքագրումից և միջոցների նպատակային օգտագործումից:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհարաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումներն իրականցվում են յուրաքանչյուր մասի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք 2024 թվականի ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ձևավորված վարչական մասի պահուստային ֆոնդը նախատեսվում է օգտագործել բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման և համայնքում կապիտալ ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու դեռևս չկատարված, շարունակական և նոր ծրագրերը, որոնք միտված են լինելու համայնքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը և զարգացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

2025 թվականի Աշոցք համայնքի բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով անշարժ գույքի և փոխադրամիջոցների հարկերի բազաները և բարձրացնել սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի ջրամատակարարման, գազամատակարարման, ճանապարհային տնտեսության և այլ բնագավառներում:
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական եւ հասարակական կյանքը:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:
- Իրականացնել արդյունավետ և թափանցիկ կառավարում:
- Խթանել համայնքի սուբվենցիով, ներդրումային ծրագրերին մասնակցային կառավարման մշակույթի ձևավորմանը:

Դիմում եմ համայնքի բնակչությանը, համայնքի ավագանու անդամներին, համայնքապետարանի աշխատակազմին, համայնքային ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2025 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**